# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԿԴՄՀՀ-ԲՄԱՊՁԲ-22/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
# ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «05» հունվարի 2022թ.

2022թ-ի հունվարի 5-ին՝ ժամը 15:30-ին, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ ինֆորմացիոն ցուցատախտակի ձեռքբերման ԿԴՄՀՀ-ԲՄԱՊՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Լուսինե Բոյաջյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ, |
| Ցոլակ Սարգսյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի սպասարկման ծառայության պետ, |
| Միքայել Ղուկասյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի տնտեսական բաժնի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Բոյաջյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը՝ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի գնումների համակարգող՝ քարտուղարը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգի վերաբերյալ ստացված պարզաբանման մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

04.01.2022թ. ժամը 15:27-ին հրավերում նշված էլ. հասցեին ստացվել է հարցում սույն ընթացակարգով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրի հետ կապված: Նույն օրը քարտուղարը Հանձնաժողովի անդամներին է ներկայացրել հարցումը:

Հանձնաժողովի ներկայացրած պարզաբանումը ներկայացված է հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստի նախագծում՝ կից ներկայացված N1 Հավելվածում:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել իրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել համապատասխանաբար 14.01.2022թ. 12:30-ին, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Բոյաջյան ____________

Հանձնաժողովի անդամներ՝

Յ. Սարգսյան ____________

Մ. Ղուկասյան ____________

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Եսայան ____________